

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 129-Ն

11 հունիսի, 2020 թվական

ՊԱՐԵՏԻ՝ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N 63 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշմամբ՝

1. Պարետի՝ 2020 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ» N 63 որոշման հավելված N 17-ի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2" Այդ նպատակով «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ն Ոստիկանությանը և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացնում նախորդ օրն արձանագրված մահերի վերաբերյալ տվյալները:

Ոստիկանությունը և մարզպետարանը/տեղական ինքնակառավարման մարմինը համատեղ ջանքերով պարզում են հոգեհանգստի և հուղարկավորության վայրն ու ժամը՝ իրենց աշխատակիցների ներկայությունն ապահովելու նպատակով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Recoverable Signature

X

VERIFIED OCSP 11/06/20 14:10:20 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ՝ ԱՎԻՆՅԱՆ